

Առողջապահության նախարարություն

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՀ կառավարության 16.05.2019 թվականի N 650-L որոշում)

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Ծրագրի հերթական համարը	Նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները
1	2	3	4
21	Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով առողջ ապրելակերպի խթանում	21.1. Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով)	Կատարվել է: 1. Հանրային իրազեկման նպատակով իրականացվել է թվով 18 հեռուստահաղորդում, թվով 4 ռադիոհաղորդում, թվով 7 հարցազրույց, թվով 5 ասուլիս, թվով 4 հաղորդագրություն: 2. Հեռուստատեսային ծառայությունների ձեռքբերման, գովազդի պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման, բժշկական կազմակերպություններում այցելուների և զորակոչիկների շրջանում իրազեկման նպատակով պաստառների տպագրության կազմակերպման նպատակով մշակվել է գնման առարկաների թվով 3 տեխնիկական բնութագիր: Գնման գործընթացի կազմակերպման գնման հայտերը հրապարակվել են: 3. Նախարարության պատվերով պատրաստվել է թվով 2 հաղորդումներ (տեսանյութ), թվով 1 սոցիալական հոլովակ: 4. Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում իրականացվել է գնման գործընթաց՝ հետևյալ ծառայությունների ձեռքբերման ուղղությամբ. 1) 3 սոցիալական հոլովակների պատրաստում և ցուցադրություն, այդ թվում 2 ամենաբարձր ռեյտինգ ունեցող հեռուստաալիքներով, 2) «Ծխելու դեմ պայքարի» ազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է Ֆլեշ-մոբ, որի հիման վրա նկարահանվել են թվով 5 սոցիալական հոլովակներ, 3) միջմարզային և Երևան քաղաքի ներքաղաքային երթուղիներ իրականացնող

		<p>ավտոբուսների թափքերի գովազդային ձևավորում – 40 հատ (Երևան քաղաքում՝ 20, միջմարզային՝ 20),</p> <p>4) միջին չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ 60 հատ և տեղադրում Երևան քաղաքում,</p> <p>5) մեծ չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ 36 հատ և տեղադրում ՀՀ բոլոր մարզերում և հիմնական մայրուղիներում,</p> <p>6) բժշկական կազմակերպություններում այցելուների իրազեկման նպատակով պաստառների տպագրություն – 1000 հատ,</p> <p>7) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով պաստառների տպագրություն - 1500 հատ,</p> <p>8) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով ցուցապաստառների (բաներների) տպագրություն – 1500 հատ:</p> <p>9) Գրաֆիտի նկարների պատրաստում և ցուցադրություն – ընդհանուր 5 նկար, որից երեքը Երևան քաղաքում և մեկական նկար Վանաձորում և Գյումրիում:</p>	<p>ավտոբուսների թափքերի գովազդային ձևավորում – 40 հատ (Երևան քաղաքում՝ 20, միջմարզային՝ 20),</p> <p>4) միջին չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ 60 հատ և տեղադրում Երևան քաղաքում,</p> <p>5) մեծ չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ 36 հատ և տեղադրում ՀՀ բոլոր մարզերում և հիմնական մայրուղիներում,</p> <p>6) բժշկական կազմակերպություններում այցելուների իրազեկման նպատակով պաստառների տպագրություն – 1000 հատ,</p> <p>7) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով պաստառների տպագրություն - 1500 հատ,</p> <p>8) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով ցուցապաստառների (բաներների) տպագրություն – 1500 հատ:</p> <p>9) Գրաֆիտի նկարների պատրաստում և ցուցադրություն – ընդհանուր 5 նկար, որից երեքը Երևան քաղաքում և մեկական նկար Վանաձորում և Գյումրիում:</p>
		<p>21.2. Առողջության առաջնային պահպանման օղակի թերապևտների/ ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացների իրականացում՝ ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության վերաբերյալ</p>	<p>Կատարվել է մասնակի: 2019 թվականին Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համատեղ առողջության առաջնային պահպանման օղակի թերապևտների/ ընտանեկան բժիշկների համար կազմակերպվել են առցանց դասընթացներ «Ծխախոտային կախվածության բուժում» թեմայով:</p> <p>2019 թվականի փետրվարի 11-ին բոլոր մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, ինչպես նաև մի շարք բժշկական կազմակերպություններ առողջապահության նախարարի թիվ ԱԹ/09/2583-19 գրությամբ ներկայացվել են համապատասխան հղումները, հորդորելով մասնագետներին մասնակցել դասընթացին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարվա ընթացքում առաջացել էին այլ առաջնահերթ կարիքներ, մասնավորապես իրականացվել էր բնակչության շրջանում լայնածավալ հակածխախոտային ուղղվածության իրազեկման արշավ, նպատակահարմար է համարվել առաջնային պահպանման օղակի թերապևտների/ ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացները իրականացնել 2020 թվականի ընթացքում</p>
<p>22</p>	<p>Էլեկտրոնային առողջապահության համակարգի ամբողջական ներդրում</p>	<p>22.1. «Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Կատարվել է: Ստեղծվել է աշխատանքային խումբ: Կատարվել է էլեկտրոնային առողջապահության համակարգերի գնահատում՝ թեստավորման և վերլուծության միջոցով: Աշխատանքային խմբի հետ քննարկվել և հաստատվել է գնահատումը: «Էլեկտրոնային առողջապահության համակարգի 2019-2023 թվականների զարգացման տեսլականը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) մշակվել և ուղարկվել է կարծիքի բոլոր շահագրգիռ մարմիններին, որից հետո ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ 18.10.2019թ. թիվ ԱԹ/17246-19 գրությամբ: Նախագծի վերաբերյալ ստացվել են կարծիքներ ինչպես</p>

			<p>ՀՀ վարչապետի աշխատակազմից, այնպես էլ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակից, որի արդյունքում նախագիծը վերամշակվել և ըստ ներկայացված պահանջի կներկայացվի ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 1-ի N 1026-Ա որոշմամբ ստեղծված խորհրդի նիստին:</p>
23	Պայքար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ	<p>23.1. «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Կատարվել է: 1. Գնահատվել է 2013-2017թթ. ընթացքում թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) տարածվածությունը և մահացության ցուցանիշները Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների հիման վրա ուսումնասիրվել են ամբողջ աշխարհում ԹՔՕՀ-ի մահացության, հիվանդացության և հիվանդելիության ցուցանիշները: Գնահատվել է ԹՔՕՀ ազդեցությունը ՀՀ տնտեսության և առողջապահական համակարգի վրա, ինչպես նաև ներգործությունը առողջապահության բյուջեի վրա՝ ընդգրկելով ուղիղ ծախսերը, ինչպես նաև անուղղակի լրացուցիչ ծախսերը: Ուսումնասիրվել են ԹՔՕՀ-ի առաջացմանը նպաստող ռիսկի գործոնները, Երևան քաղաքում և ՀՀ մարզերում մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Մշակման փուլում է գտնվում «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕԲ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված ժամկետում կներկայացվի վարչապետի աշխատակազմ:</p> <p>2. «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով 24.09.2019թ. թիվ ԱԹ/02.1/15878-19 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>
		<p>23.2. «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Կատարվել է: 1. Ուսումնասիրվել են չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջազգային փորձը, ինչպես նաև ՀՀ վիճակագրական տվյալները: Մեկնարկել են չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարության մշակման աշխատանքները, մասնավորապես՝ մշակվել են Ռազմավարության «Ռազմավարության անհրաժեշտություն» և «Ռազմավարական նպատակներ», «Իրավիճակի նկարագիր» գլուխներն իրենց ենթաբաժիններով:</p> <p>2. Մշակվել է «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ս.թ. դեկտեմբերի 11-ի թիվ ԱԹ/02.1/23352-2019 գրությամբ կարծիքի է ուղարկվել արդարադատության նախարարություն: Միաժամանակ</p>

			<p>Նախագիծը 20.12.2019թ. թիվ ԱԹ/02.1/24088-2019 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:</p>
		<p>23.3. Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում</p>	<p>Կատարվել է: 1. Ուսումնասիրվել է ՀՀ-ում սիրտ-անոթային հիվանդությունների տարածվածությունը և վիճակագրական տվյալները, ինչպես նաև սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջազգային փորձը: Միջոցառումների ծրագրի նպատակների նախագծման համար աշխատանքային հանդիպումներ են իրականացվել ԱՆ սրտաբանության գծով գլխավոր խորհրդատուի հետ: Առողջապահության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրություններ է իրականացրել սրտի անհետաձգելի ստենտավորում (Stent for life) ծառայություն իրականացնող թվով 11 բժշկական կազմակերպություններում՝ ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:</p> <p>2. Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատվել է առողջապահության նախարարի 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ 2341-Լ հրամանով և 27.08.2019թ. թիվ ԱԹ/02.1/14039-19 գրությամբ ներկայացվել վարչապետի աշխատակազմ:</p>
24	<p>Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում</p>	<p>24.1. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Կատարվել է: 1. Ուսումնասիրվել է տվյալ ոլորտում միջազգային փորձը, գնահատվել է առկա իրավիճակը Հայաստանում, նախագծի կարևորագույն կետերը քննարկվել են ԱՆ շահագրգիռ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, նախանշվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականի հիմնական սկզբունքային ուղղությունները:</p> <p>2. Մշակվել է «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որը 18.12.2019թ. թիվ ԱԹ/02.2/23444-2019 գրությամբ ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս Վարչապետի աշխատակազմից ստացված եզրակացության հիման վրա կատարվում է նախագծի լրամշակում:</p>
		<p>24.2. «ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի</p>	<p>Կատարվել է: 1. Ձևավորվել է աշխատանքային խումբը, կայացել են աշխատանքային խմբի հանդիպումները, տեղական փորձագետների աջակցությամբ մշակվել է նախագծի նախնական տարբերակը: Մոտակա շաբաթների ընթացքում ակնկալվում է նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տեխնիկական աջակցություն:</p> <p>2. Հունիս ամսվա ընթացքում, համաձայն Կառավարությանը ներկայացված պլան-ժամանակացույցի, ձևավորվել է հնգամյա զարգացման ռազմավարության նախագծման</p>

		<p>աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>աշխատանքային խումբը: Այն կազմված է համակարգող գործառույթ իրականացնող քարտուղարությունից և բովանդակային վերլուծություն տրամադրող տեղական մասնագետներից, ովքեր ապահովել են արդի և առաջնահերթ ուղղությունների ռազմավարական զարգացումների տեսլականի նախագծումը: Մի շարք հանդիպումների և քննարկումների արդյունքում նախագծվել է հայեցակարգային փաստաթղթի կառուցվածքը, հիմնական դրույթները և ակնկալվող արդյունքի ձևաչափը: Այնուհետև, առողջապահության հնգամյա զարգացման ռազմավարության մշակման համար իրականացվել է ոլորտային կարիքների գնահատում և ռազմավարության բովանդակության մշակում (իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, հիմնախնդիրների լուծման նպատակը, նպատակին հասնելու ռազմավարական ուղղությունները): Փաստաթղթի բովանդակությանը տեխնիկական աջակցություն են տրամադրել նաև առողջապահության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող միջազգային փորձագետները: Հուլիսի 22-ից օգոստոսի 2-ը ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցել մի քանի նեղ ոլորտային հանդիպումներ և քննարկումներ՝ լրացուցիչ հետադարձ կապ ապահովելու նպատակով: Օգոստոսի 5-9 ընկած ժամանակահատվածում իրականացվել են ստացված առաջարկների հիման վրա ռազմավարության հայեցակարգի փոփոխման և խմբագրման աշխատանքները: Օգոստոսի 12-14 ռազմավարության նախագծմանը աջակցելու համար Հայաստան է ժամանել ԱՀԿ առաքելությունը: Օգոստոսի 13-ին ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում տեղի է ունեցել հանրային քննարկում՝ բժշկական ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների, ԱՆ հանրային խորհրդի անդամների, միջազգային կազմակերպությունների և առողջապահության ոլորտում առաջատար այլ շահառուների և մասնագետների մասնակցությամբ: Քննարկման ընթացքում բարձրաձայնվել են մի շարք հարցեր և ներկայացվել առաջարկություններ՝ ռազմավարության նախագիծը առավել թիրախային դարձնելու նպատակով: Հանրային քննարկումների արդյունքների հիման վրա լրամշակված նախագիծը ուղարկվել է գերատեսչություններ՝ կարծիքի, միաժամանակ հանրային քննարկման դրվել իրավական ակտերի նախագծերի e-draft կայքում՝ հանրային քննարկման: Գերատեսչություններից ստացված կարծիքների հիման վրա լրամշակման նախագիծը 17.12.2019թ. թիվ ԱԹ/19/22848-2019 գրությամբ առաքվել է Վարչապետի աշխատակազմ:</p>
--	--	--------------------------------	--

25	Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ պայքար	25.1. «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում	Կատարվել է: Հաստատվել է Առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 27-ի «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1387-Լ հրամանը:
26	Մոր և մանկան, առողջության բարելավում, վերարտադրողական ներուժի ավելացում, ծնելիության անկման տեմպերի նվազեցում	26.1. «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Կատարվել է: 1. Իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում պերինատալ կորուստների ու անպտղության պատճառագիտության ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալների վերլուծություն: 2. Կառավարության որոշման նախագծի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է երկամյա ժամկետում քննարկման ներկայացնել «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: 3. ՀՀ կառավարություն է ներկայացվել «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը 10.11.2019թ. թիվ ԱԹ/03.1/18887-2019 գրությամբ: 3. Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի «Ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ ուղեգրման կարգը և ըստ բժշկական կազմակերպությունների մակարդակների հղիների/ծննդաբերների ուղեգրման և հոսպիտալացման բժշկական ցուցումներն ու պայմանները հաստատելու մասին» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 20 մայիսի 2013 թվականի N 1371-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի փետրվարի 4-ի N 256 - Ա հրամանը: 4. Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի 06.02.2019թ. «Նորմալ և բարդության տարբեր աստիճանների ծննդաբերությունների ու կեսարյան հատումների բնութագրերը հաստատելու մասին և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 08 օգոստոսի 2012 թվականի N 1816-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 285-Ա հրամանը: 5. Երևան քաղաքի 3-րդ մակարդակի ծննդօգնության բժշկական կազմակերպությունների կողմից մարզերի ծննդօգնություն բժշկական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության, կլինիկական

			<p>ուղեցույցների ներդրման աջակցման, «մազից կախված դեպքերի» քննարկման նպատակով այցեր իրականացնելու նպատակով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Մարզերի բժշկական կազմակերպությունների մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներին և ծննդատներին կցվող 3-րդ մակարդակի ծննդօգնության բժշկական կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 3100- Ա հրամանը, որը ներկայացվել է համապատասխան բժշկական կազմակերպություններին և մարզպետարաններին:</p> <p>6. Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի «Պտղի ներարգանդային զարգացման արատների/անկանոնությունների ախտորոշման և վարման հարցերով մասնագիտական խմբեր, կենտրոնական հանձնաժողով ստեղծելու, դրանց կազմը հաստատելու և պտղի ներարգանդային զարգացման ախտահարումների ախտորոշման և վարման մասնագիտական կոնսիլիումի ու կենտրոնական հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 3257 – Լ հրամանը:</p> <p>7. «Պտղի սրտի ծրագիր» ներդնելու շրջանակներում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից մարզերում իրականացվել են հանդիպումներ մանկական սրտաբանների և մանկաբարձ-գինեկոլոգների հետ:</p> <p>8. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ, «Տղաների նախընտրության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում, մարզերի մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների մանկաբարձ-գինեկոլոգների և սոնոգրաֆիստների համար կազմակերպվել են 1-օրյա դասընթացներ</p>
29	Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական բուժօգնության մատչելիության և որակի բարելավում	29.1. «Մանկական վերականգնողական բժշկական օգնության մատչելիության բարելավման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում	<p>Կատարվել է: 1. Առողջապահության նախարարության, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, Սևանի բժշկական կենտրոնի և Սևանի քաղաքապետարանի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ Սևան քաղաքում ֆիզիկական և զարգացման խնդիրներով, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված վերականգնողական կենտրոնի ստեղծմանն ուղղված համագործակցության վերաբերյալ:</p> <p>2. Մշակվել և առողջապահության նախարարի 19.11.2019թ. N 3462-Լ հրամանով հաստատվել է «Մանկական վերականգնողական բժշկական օգնության մատչելիության բարելավման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին», համաձայն որի նախատեսվում է ծառայությունը կանոնակարգող մի շարք փաստաթղթերի մշակում և նոր մարզային վերականգնողական կենտրոնների ստեղծում:</p> <p>3. 2019թ. պետական բյուջեի հաշվին իրականացվել է հաշմանդամ երեխաների առողջարանային բուժում՝ «Արարատ» մոր և մանկան առողջարանում՝ 158 երեխա, և</p>

			<p>Ապարանի առողջարանային ճամբարում՝ 123 երեխա, որոնց զգալի մասը՝ խնամողի ուղեկցությամբ, ընդ որում 2019թ. նոյեմբերից առողջարանային պայմաններում անհատական խնամքի կարիք ունեցող երեխաների խնամողների սննդի և կեցության ծախսերը ապահովվել են, անկախ ընտանեկան նպաստների համակարգում նրանց ներգրավվածությունից:</p> <p>4. Նպատակային ծրագրի շրջանակներում Առողջապահության նախարարության, «Արաբկիր» Միացյալ մանկական հիմնադրամի և «Արաբկիր» ԲՀ - ԵԴԱԻ փորձագետների կողմից կատարվել է Հայաստանում գործող մանկական վերականգնողական ծառայությունների կարողությունների արագ գնահատում, գործող ծառայությունների քարտեզագրում, ոլորտի հիմնախնդիրների վերհանում, ՖՄԴ (ICF) հիման վրա երեխաների զարգացման խանգարումների գնահատման, դասակարգման և վարման համար մի շարք գործիքների մշակում, ծառայությունների բարելավման նպատակով առաջարկությունների փաթեթի պատրաստում: Փաթեթը ներկայացվել է կլոր սեղանին շահագրգիռ գերատեսչություններին, մասնագիտական կառույցներին և հասարակական կազմակերպություններին:</p>
30	Մարզային հիվանդանոցների արդիականացում	<p>30.1. Վայոց ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով</p> <p>30.2. Գեղարքունիքի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով</p>	<p>Կատարվել է. ՀԲ կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային թիվ 5222-ԱՄ Համաձայնագրի շրջանակներում մշակվել են ՀՀ Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքում նոր մարզային հիվանդանոցի (այսուհետ՝ հիվանդանոց) շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնք անցել են համալիր փորձաքննություն և հանձնվել Պատվիրատուին 2019թ. հոկտեմբերի վերջին:</p> <p>Ներկայում որոշվել է վարկային ծրագրից հանել Վայոց ձորի նոր հիվանդանոցի շինարարական և հագեցման աշխատանքները: Կառավարությունը քննարկում է Վայոց ձորի նոր հիվանդանոցի շինարարական և հագեցման աշխատանքները այլ միջոցներով ֆինանսավորելու հարցը:</p> <p>Կատարվել է: ՀԲ կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային թիվ 5222-ԱՄ Համաձայնագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու ԲԿ (այսուհետ՝ ԲԿ) շենքի կառուցման նպատակով մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր: ԲԿ շենքի կառուցման շինարարական աշխատանքները իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով 2019 թվականի դեկտեմբերի 23-ին հայտարարվել է մրցույթ: 2020թ. 2-րդ եռամսյանի սկզբին նախատեսվում է մեկնարկել Մարտունու ԲԿ նոր շենքի շինարարական աշխատանքները:</p>
34	ՀՀ բնակչության	34.1. ՀՀ բնակչության ռիսկային խմբերի շրջանում	Կատարվել է: 01.01.2019թ. - մինչև 31.12.2019թ. իրականացվել է շուրջ 558 հազար հետազոտություն, որից 57,960 ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 161,000

<p>ոհսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում</p>	<p>սքրինինգային հետազոտությունների իրականացում՝ ըստ հետևյալ հիվանդությունների՝</p> <ul style="list-style-type: none"> • հիպերտոնիա, • շաքարային դիաբետ, • արգանդի պարանոցի քաղցկեղ 	<p>քաղաքացիների մոտ որոշվել է արյան մեջ գլուկոզի մակարդակը, շուրջ 320,000 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ և 19,050 կին 36-38 շաբաթական հղիության ժամկետում անցել են մեզի և արյան հետազոտություն:</p>
	<p>34.2 Շարժական մամոգրաֆ սարքի ձեռքբերում և կրծքագեղձի սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ոհսկային խմբերի շրջանում</p>	<p>Կատարվել է: Մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռքբերման նպատակով 22.07.2019թ. կնքվել է պայմանագիր: Սարքավորումը մատակարարելուց հետո, համաձայն ծրագրավորված ժամկետների՝ 2020թ. առաջին եռամսյակում, Լոռու մարզում կմեկնարկի կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագիրը: 11.11.2019թ. մեկնարկել են կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման կլինիկական ուղեցույցի մշակման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2020թ. փետրվարին, ինչից հետո կմեկնարկեն սքրինինգային ծրագրում ընդգրկված բժշկական անձնակազմի կրթման աշխատանքները:</p>